

Մ Ա Ն Ր Ա Վ Է Պ Ք

Անշիրոքոսիան :

Փոկիոն՝ աթենացւոց երևելի զօրա-
վարը՝ « Զըվայլեր , կ'ըսէր , ազնուա-
կան մարդու՝ իր խօսքին մէջ խածնող
ու կծու ոճ մը բանեցընել » : Ինքը համ
բերութեամբ կը լռէր այսպիսի խօսքե-
րու : ()ը մը ժողովրդեան դիմաց ճառ
խօսելուն ատեն՝ թշնամի ճարտասանին
մէկը խօսքը կտրեց , ու սկսաւ բերնին
տալ . Փոկիոն թողուց որ ուզածին չափ
խօսի , մինչև որ յոգնեցաւ , այն ատեն
նորէն ոտք ելաւ ու սկսաւ իր ճառը ա-
ռաջ տանիլ իբր թէ ամենեւին բան մը
լսած չըլլար :

Սիլա՝ բոլոր աշխարհք սպանու-
թեամբք ու անիրաւութեամբ լեցընե-
լէն ետև , հրաժարեցաւ յանկարծ այն
ինքնիշխան պետութենէն՝ որ այնչափ
ծանրի նստաւ հռովմայեցւոց , ու իբրև
սոսկական քաղաքացի մը՝ դարձաւ պա-
լատը քաշուելու : Ստահակ երիտասարդ
մը քաջութիւն ուզելով ծախել , ելաւ
Սիլայի ետևէն ինկաւ ու մինչև ի տուն
նախատինք չմնաց որ իրեն չընէ : Իմե-
նեին պատասխան մը չտուաւ Սիլա ,
և ոչ իսկ աներեսին երեսն ուզեց նայե-
լու . ու անխռով կերպով մը դարձաւ
քովիններուն , « Բարեկամք , ըսաւ ,
այս խեռ պատանին պատճառ պիտի ըլ-
լայ որ ինձմէ ետև ոչ ոք սիրով իր կա-
մօքը իշխանապետութենէ հրաժարի » :

Պրէնըվիլի պատերազմին մէջ (1119)
երբ գաղղիացիք յաղթուած Եորման-
տիոյ դքսէն՝ սկսան ետ ետ փախչիլ ,
անգղիացի սպայ մը վազեց Լուդովիկոս
Յոյր Վաղղիոյ թագաւորին հասաւ ու
ձիուն սանձէն բռնած՝ սկսաւ « Թագա-
ւորը գերի է » պոռալ : Լուդովիկոս ա-

ռանց շփոթելու , « Զե՛ս գիտեր , ը-
սաւ , որ և ոչ իսկ սատրինձ խաղին
մէջ թագաւորը բռնել կ'ըլլայ » . ու
մէկ հարուածով մը զանգղիացին գետին
փռելը մէկ ըրաւ :

Սպանիոյ Փիլիպպոս Բ թագաւորը
բազմաթիւ նաւերու խումբ մը զինեց
ու անունը դրաւ Անյալիէլի , որովհետև
զԼ'նգղիայ այն նաւատորմով անշուշտ
պիտի նուաճէր . բայց հազիւ թէ նա-
ւախումբը Բրիտանիոյ դիմացն էր հա-
սած՝ սոսկալի մըրիկ մը ելաւ ու բոլոր
ցիրուցան ըրաւ թագաւորին ահաւոր
զօրութիւնը : Փիլիպպոս երբ այս գուժն
առաւ և լսեց թէ ինչպէս ծովակալը կը
զարհուրէր առջևն երևնալու , անխռով
ոգւով մը , « Իշխանդ իմ , գրեց անոր ,
ես քեզի մարդկանց յաղթել հրամայեր
էի չէ թէ փոթորիկներու » :

Ինքամ մ' ալ տէրութեան հարկա-
ւոր գործողութեանց համար գիշերը
երկար ատեն նստած հրամանագիրներ
գրեց իր այլ և այլ կուսակալացը , ու
առտուն կանուխ կանչեց իր գրագիրը ու
հրամայեց որ անոնց հասցէները գրէ ու
մէկէն խրկէ : Վրագիրը շուտով մը գրե-
լէն ետև , որպէս զի շուտով ալ չորնան՝
վրանին ուզեց փոշի ցանել , բայց կէս
մը արտորալէն կէս մ' ալ դեռ քունը
գլուխն ըլլալէն փոշնոցին տեղ կաղա-
մարն առաւ ու հրամանագիրներուն վը-
րան ցանեց : Թագաւորը զարմանալի
հանդարտութեամբ « Փոշնոցը հոս է ,
ըսաւ , տեղը միտքդ պահէ » , ու նստաւ
ծայրէ ծայր նորէն գրեց ինչ որ անու-
շաղիւր գրագիրը աւրեր էր ու աղտոտե-
րուն վախը կրնայ մակաբերուիլ :

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ